ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 21-ը դեկտեմբերի 2018թ.

ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Է. Համբարձումյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյան:

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Գ. Տերյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/21» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

-Համաձայն պատասխանատու ստորաբաժանման 26.12.2018թ. ներկայացրած եզրակացության՝ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից 8-րդ չափաբաժնով ներկայացրած ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում վերոնշյալ ընթացակարգի հրավերով այդ չափաբաժնով ներկայացված ապրանքի անվանմանը և տեխնիկական բնութագրին:

Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել վերոնշյալ մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

1. « Ավտոֆան Էյ Սի » ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվեց առկա անհամապատասխանությունը և հաշվի առնելով 09.01.2019թ. պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած մասնագիտական եզրակացությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ Հավելված N6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) գնահատել ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերի պահանջներին համապատասխան:

Քանի որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված որոշ պարամետրերի ինդեքսների նշանների փոխարեն համակարգի կողմից նշվել են թվեր, օրինակ՝ 45[0]C փոխարեն նշվել է 450C կամ մ[2] փոխարեն մ2, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում կայացվեց տվյալ դեպքերում մասնակիցներից շտկումներ չպահանջել, իսկ պայմանագրերի կնքվելուց հետո մատակարարման ժամանակ հաշվի առնել այդ փաստը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 09.01.2019թ. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ 7/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջիններիս հայտարարել

ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/21» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Գ. Ուստյան
Գնահատող	Կ. Մխիթարյան
Գնահատող	Է. Համբարձումյան
Գնահատող	Ա. Մկրտչյան
Քարտուղար	Գ. Տերյան